Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1775

1239

ԵՏԱՊԱՊԻՐ

ՍՐԲՈՒՀԻՈՑ ՄԱՅՐԱՊԵՏԻ

ՆՇԱՆԵԱՆ ԳԱԼՓԱՅԵԱՆՑ

ՎԱՍՆ ՈՐԲԱՆՈՑԻ ԵՂԿԱՆՑ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԽԱՍԳԻՒՂ

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ՄԻՐԱՅԵԼԵԱՆ

Ի գրան Զարդիի գրոց Ցիրիք-փաշա խան

Վերի Յարկ թիւ 13

— 1876 —

ՊՏԱՊԱՊԻՐ

ՍՐԲՈՒՔԼԻՈՅ ՍԱՅՐԱՊԵՏԻ

ՆՇԱՆԵԱՆ ԳԱԼՖԱԵԱՆՑ

ՎԱՍՆ ՈՐԲԱՆՈՅԻ ԱՂՋԿԱՆՑ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԹԱՍԳԻՒՂ

1775

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Գուցուն Զորչիի գլուխ Ճէրիֆ-Փաշա խան

Վերի Յարկ թիւ 13

ՅԱՌՈՒԹԻՒՆ

ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Եւ՝ Սրբուհի մայրապետ Նշանեան Գալֆա-
եանց, Հայկազն Լուսաւորչակրօն, ծնեալ
'ի Քարթալ գեղջ մերձ 'ի Կոստանդնուպօլիս,
1822, առողջ մտօք և յօժար կամօք գամ այս-
օր՝ 'ի նաւակատիս փառաւոր տօնի անզուգական
ազգասիրայ Սրբոյ Վարդանանց 1876 Փետրվար
12/24, կարգադրել և գրել զայս Կտակ, որով
Լուսաւորչական Սուրբ Աթոռոյն հարազատ սի-
րելի Աղջիս ընդհանրութեան նուիրեմ որբ և
անտէրունչ աղջիկ տղայոց պատսպարան և կըր-
թարան Որբանոցն՝ զոր յաջողեցայ հիմնել 'ի
Կոստանդնուպօլիս յամի 1866, և օժտել և բա-
րակարգել, անհուն ողորմութեամբն Աստուծոյ,
և շնորհիւ Վեհափառ Սպտ-իւլ-Ազիզ Կայսեր
Օսմանեան, և սատարօք և նուիրօք բարերա-
բայ ազգայնոց և օտարաց։

Ա. ՏՈՒՆ ՈՐԲՈՅ

Այս տուն որբոց՝ զոր Տաքէսեան բարեյի-
շատակ դերդաստանէն գնեցի լինն հարիւր յիսուն

օսմանեան ոսկիի, Կոստանդնուպոլսոյ Խասգիւղ արուարձանի Պ.պտիւլ Ալլամ Թաղի Թիւրպէ փողոցի մէջ վեց թուահամարաւ կառուցեալ է փայտաշէն, ունելով երկոտասան սենեակ և սրահ, և մէկ քարաշէն բաղանիք և շրջապատեալ պարտիզօք, ուր աղբիւր մի հաստատեալ 'ի Տաքէսեան Տաքէս ամիրայէ՝ անոյշ և հոսանուտ ջուր մատակարարէ մշտնջենապէս։

Այն տան և պարտէզին գեղին՝ չորս հազար հինգ հարիւր օսմանեան կանգուն տարածութեամբ, Սուլթան Պէյազիտի վաքֆէն է, որմէ առնուած է երկու կոտոր կալուածագիր սէնէք, որոց օրինակներն 'ի հայ դրոշմեալ կը յաբեմ կոտակագրոյս։

Այն կալուածագրերն յայտ առնեն թէ Որբանոցն՝ Երամեան առաքինասէր Էպրու տիկնոջ անուան ֆէրաղ եղած արձանագրուած է։ Սակայն կալուածագրերն խիստ բով են. և աւանդապահ Տիկինն վաւերական մուրհակ տուած է՝ որբանոցն իր ստացուածք չը լինելուն 'ի հաստատութիւն, ինչպէս կը ցուցընէ օրինակը որ 'ի վերջ կոտակագրոյս։

Իսկ անոյշ և մշտահոս ջուրը՝ որ Խասգիւղ Կէլկէլեանց մեծ տան առջևի անչէն գետնին ներքևէն բղխելով, ստորերկրեայ ճանրով կուգայ մինչև Որբանոց, սեպհականութիւն է Որբանոցս։ սակայն իր երկու կոտոր սենեակներն որ ջրաբաշխ պաշտօնէութեան կողմէն առնուած են, տան նախկին տէր Տաքէսեան Դանիէլ աղային անուան արձանագրեալ կը մնան, և սա ինքնագիր վաւերական մուրհակաւ հաստատած է նոյն ջուրին Որբանոցի սեպհականութիւն լինելն։ և այս սենեակներուն և մուրհակի օրինակներն կը տակիս կցելով հաղորդեմ Աղգիս։

Զ. ԱՄԱՐԱՆՈՑ ՈՐԲՈՑ

Այս ամարանոց միայարկ շէնք մ'է քարուկիր, հինգ սենեակով և սրահով. զոր Բարթալ դեղի Պաղիր եոլ փողոցի մէջ կառուցանել յաջողեցայ, և որբ տղէկանց սեպհականելով, յանուն սուրբ կուսին Մարիամու, Պաշտպանի Որբանոցիս, Մարիամ պիկրի Յովակիմ անուան ֆէրաղ ընել տուի։ Տե՛ս ասոր ալ երկու կոտոր սենեակներուն օրինակներն 'ի վերջ կոտակագրոյս։

Այն ամարանոցի գետինը՝ նուէր է աղնուաշուք Ուսուլ Տիկնոջ Փիշմիշեան, և վաճառական Խաչիկ աղայի Ղազարոսեան։

Իսկ շինութեանը մասնաւոր նպաստ և մեծ խնամք ըրած է Ճարտարապետ Նիկողոս էֆէնտի Յովասափեան։

Յ. ԿԱԼՈՒԱԾՔ ՈՐԲՈՅ

Որբոյ կալուածներն առ այժմ երկու են։

Մէկն է կրպակ մը (մաղազա), Ղալաթիա Մօնմանէ փողոցի մէջ, թիւ մէկ, զոր հանգանակութեամբ ազգայնոց յաջողեցոյց գնել երեք հարիւր օսմանեան ոսկիի, և Որբանոցիս կալուած սեպհականեցի։ Սորա միւք և կէտիկ Բաղտասարեան Վսեմաշուք Յարութիւն էֆէնտիի անուանն արձանագրեալ են. և երկու կըտոր վէնէրներուն օրինակներն և ուսանդապահի մուրհակի օրինակն կտակագրոյս վերջը կը հրատարակեմ։ Այն կրպակ առ այժմ երեք հազար ղուրուշ տարեկան հասոյթ կը բերէ Որբանոցիս։

Երկրորդն է՝ կրպակ մը (խանութ) քարաշէն Կոստանդնուպոլիս Վալիտէ խանի մէջ, վսթասուն և հինգ թուահամարաւ, զոր Բաղտասարեան Մաբրիկ և Անդրիկ տիկնայք նուիրած են Որբանոցիս. և թէպէտ կալուածոյս երեք կտոր վէնէրներն բարեպաշտուհի նուիրատուայ անուան ֆիքրաղ եղած կը մնան, սակայն սոքա իրր աւանդապահ մուրհակ տուած են նոյն կըրպակի Որբանոցիս սեպհականութիւն լինելուն. որոյ օրինակն, ինչպէս նաև վէնէրներուն օրինակներն տե՛ս 'ի վերջ կտակագրոյս։ Այն կըրպակ առ այժմ հազար երեք հարիւր ղրուշ տարեկան հասոյթ կը բերէ Որբանոցիս։

Կ. ԳԱՆՁ ՈՐԲՈՅ

Որբանոցս ունի առ այժմ, Ա. Հարիւր քսանչորսիսուն օսմանեան. նուէր Բարակէօղեան Երմոնիկ տիկնոջ. որ թէպէտ իր քով պահած է քսանչորսիսներն, սակայն ամեն տարի Որբանոցիս կը վճարէ տարեկան շահը։

Բ. Հարիւր քսանչորսիսուն օսմանեան, նուէր Մարիամ տիկնոջ Եաղըճեան, որ ինձ յանձնած է քսանչորսիսներն։

Գ. Մէկ Ռումելիի երկաթուղոյ բաժնետոմս. թիւ՝ ինն հարիւր եօթանասուն և ութ հազար երեք հարիւր իններսուն և չորս։

Դ. Մէկ Պուրրէշ քաղաքի փոխառութեան տոմսակ. թիւ՝ տասներկու, կարգ՝ երկու հազար ինն հարիւր իններսուն և եօթն։

Տ. ԹՈՂԱԿ ՈՐԲՈՅ

Որբանոցս ունի օրական տասն և հինգ հոխա հայ և եօթնուկէս հոխա մահ՝ թոչակ, զոր իմ և որբոցս աղերսագրերն ընդունելով Վեհափառ Կայսրն Ապտուլ-Ազիզ շնորհեց մշանջենապէս 1870 Մայիս 2ին, և զոր վայելեն որբուհիքս հանապազօր։ Տե՛ս սոյն թոչակի պաշտօնական վկայագրին օրինակն 'ի վերջ կտակագրոյս։

Ց. ԿԱՐԳ ԵՒ ԿԱՆՈՆ ՈՐԲԱՆՈՅԻ

Յօդ. 1 — Որբանոցը՝ Սուրբ Էջմիածնի ամենայն Հայոց Հայրապետութեան հովանաւորութեանը տակ գտնուող Հայկազուն որբ և անտէրունչ աղջիկ տղայոց Պատսպարան և Կրթարան հաստատուած է, և կը յանձանձի Որբասէր ընկերուհեաց ձեռօք, ընդ վերատեսչութեամբ Որբանոցի Մօր։

Յօդ. 2— Որբանոցի գոյից և հասից տէր են և անոր խնամքը վայելելու իրաւունք ունին այն որբերը միայն՝ որ անդ ընդունուած են և պատըսպարուած։ Այսոնք կը կորսուանեն այն իրաւունքը. երբ Որբանոցէ կըզատուին՝ ամուսնութեամբ կամ այլում որդեգրութեամբ և կամ այլուր պաշտօնակալութեամբ։

Յօդ. 3. — Նոյնպէս Որբանոցի գոյից և հասից տէր են որբերուն հետ՝ այն Որբասէր ընկերուհիք՝ որ զիրենք անոր յանձանձանաց նուիրած են, և ձրիարար կաշխատին որբոց խնամարկութեան թէ՛ Որբանոցի անդ և թէ՛ Վերատեսուչ մօր յանձնարարութեամբ՝ անկէ դուրս տեղ։ Այսոնք ալ կը զրկուին այն իրաւունքէն երբ կարտաքսուին և կամ կամովին կը զատուին որբասիրաց ընկերութենէն։

Յօդ. 4 — Որբասիրաց ընկերութիւնը կը բաղկանայ Որբասէր ընկերուհիներէ, որ Քոյր կը կոչուին, և որոց գլուխ է Որբանոցի Մայրը։

Յօդ. 5 — Որբասէր ընկեր և քոյր կ'ընդունուին այն ամեն օրիորդք և այրի տիկնայք՝ որ յօժարամիտ ինքզինքնին կը նուիրեն որբոց ձրիապէս խնամարկութեան, և կոխտեն կատարեալ հնազանդութիւն կարգաց և կանոնաց Որբանոցի։

Յօդ. 6 — Որբասէր ընկերուհի կընդունուին նաև Որբանոցի պատսպարեալ որբերէն անոնք՝ որ հասակաւ քսան տարին լրացուցած և կրթութիւننին յառաջ տարած ըլլալով, իրենց վարքով և բարքով արժանաւոր կը հանդիսանան Որբասէր ընկերուհեաց կարգն անցնելու՝ առաջի վերատեսուչ Մօր և իւր Խորհրդականաց։ Այսոնք այն վայրկեանէն որոց դասէն կելնեն և Քոյր անունը կառնուն, և միևնոյն ուխտ կընեն և միևնոյն պաշտօն և պարտաւորութիւն կ'ըստանձնեն՝ ինչ որ դրսէն ընդունուած Քոյրերը։

Յօդ. 7 — Որբասէր քոյրք ազատ են իրենց ուխտը փոխել և ընկերութեան անդամակցութենէ բաժնուիլ, երբ և կամին. բաւական է որ զէթ ամիս մը առաջ իրենց դիտաւորութիւնը գրով յայտնեն Որբանոցի Մօր։ Իսկ եթէ այս պայմանէն դանց առնեն, և զանխելաբար իսմ

բոցարձակապէս ձգեն երթան Որբանոցէն, այն-
պիսիք արտաքսեալ կը համարուին Ընկերութե-
նէն, և այնպէս կը հրատարակուին վերատեսուչ
Մօր կողմէն։

Յօդ. 8 — Այն ընկերուհիք որ իրենց ուխ-
տը դրժելով անհնազանդութիւն կընեն կարգաց
և կանոնաց Որբանոցի, երկիցս և երիցս խրատ-
ուելէն ետքը եթէ յուղղութիւն չի գան, ինչ-
պէս նաև անոնք որ անկարգութեամբ կըվարուին,
Հաստատութեան պատուոյն արատ կը բերեն և
յետ յորդորանաց չեն ղգաստանար, Որբասիրաց
ընկերութենէն կարտաքսուին՝ Մօր և իւր Խոր-
հրդականաց որոշմամբը։

Յօդ. 9 — Որբանոցի Մայրը գլուխ է որ-
բասիրաց ընկերութեան, Մայր որբոց և Վերա-
տեսուչ Որբանոցի։

Յօդ. 10 — Որբանոցի Մօր պաշտօնը
ցկեանս կը տեւէ, նաև եթէ հիւանդութեան
կամ ծերութեան պատճառաւ անկարող ըլլայ իր
պաշտօնը վարելու։ Այնպիսի պարագայից մէջ
ընկերուհեաց Ընդհանուր ժողովոյ առաջարկու-
թեամբ և պատրիարքական ընտրութեամբ Տե-
ղակալ մը կարուի ընկերուհեաց մէջէն, և նա
կը վարէ Մօր պաշտօնը յանուն նորա և մինչև
ցմահ նորին։

Յօդ. 11 — Սակայն եթէ Որբանոցի Մայրը
անհաւատարիմ գտնուի իր կոչման և ուխտին,
և վարքով կամ գործով բարոյապէս կամ նիւ-
թապէս վնաս պատճառէ Որբանոցի, ամբաստա-
նութեան ներքև կընկնի։

Ամբաստանութիւնը Որբանոցի խոստովանա-
հօր միջոցաւ առ Պատրիարք Կոստանդնուպոլսոյ
կուղղուի, և անոր միջոցաւ կը քննուի. և եթէ
ամբաստանեալն ինքզինք չկրնայ արդարացնել,
և վիճակամ և երկիցս խրատուելէն ետքը՝ դար-
ձեալ յուղղութիւն չի գայ, պաշտօնէն կը ձըգ-
ուի Պատրիարքի ձեռքը։

Յօդ. 12 — Որ և է պատճառաւ Որբանոցի
Մօր տեղը թափուր մնացած ժամանակ՝ Խոր-
հրդական երեք ընկերուհիք անոր պաշտօնը առ
ժամանակեայ ձեռք կառնուն. և յաջորդին
ընտրութեան համար վաղվաղակի Ընդհ. Ժո-
ղովի կը կազմեն Որբասէր ընկերուհիներէն։ Սակ-
ժողովի գործողութիւնք վաւերական համարուելու
լու համար պէտք է անդ ներկայ գտնուին Որ-
սէր քոյրերուն մեծագոյն մասն, առ նուազն կէսէն
մէկ աւելին։ Որբանոցի խոստովանահայրը նա-
խագահ կը բազմի սոյն գումարման, ուր նախ
Որբանոցի Հիմնադրին կտակը հրապարակաւ կը
կարդացուի, և ապա իւրաքանչիւր ընկերուհի
առանձինն քուէներ մը վրայ գաղտնապէս կը

գրէ Որբանոցի Մօր պաշտօնին ըստ իւր խղճի ա-
ժենէն արժանաւոր ընկերուհւոյ անունը. և քուէն
ծալելով կը ձգէ քուէտուփին մէջ՝ որ կանխաւ
պարապ բլրոյն հրապարակաւ ստուգուած և
կնքուած մնայ անդ՝ առաջի նախագահ քահանա-
յի։ Քուէարկութիւնը լմննալէն ետքը քուէհա-
մար կը ելլայ յատենի ժողովոյ, և ցուցակի մը
մէջ կարձանագրուին բոլոր քուէ առնող ընկե-
րուհւոյ անունները, քուէից առաւելութեան
կարգաւ։ Այս ցուցակը կստորագրեն բոլոր ժո-
ղովականք և նախագահ քահանայն. ինչպէս
նաև քուէարկութեան բոլոր գործողութեանց
ստենագրութիւնը. և նախագահ քահանայն
զանոնք կը ներկայացունէ Կոստանդնուպօլսոյ
Պատրիարքին։ Պատրիարքը յիշեալ ներկայաց-
ման ցուցակէն իւրաքանչիւր ընկերուհւոյ իր ըն-
կերաց քով ունեցած վարկն և վստահութեան
աստիճանն հասկնալով, և քուէ ստացող քոյրե-
րուն ամէն մէկին արժանիքն առանձինն ստու-
գելով, վերջապէս երեք աւուր մէջ կընտ-
րէ, առաւելագոյն քուէ ստացողաց մէ-
ջէն ամենէն արժանաւորը, Մայր Որբոց և Ղե-
բատեսուչ Որբանոցի, և կոնդակաւ կը ծանու-
ցանէ ղընտրութիւն նորա որբասէր ընկերուհ-
ւոյ և ընդհանուր Աղգին։

Յօդ. 13. — Որբանոցի նորընտիր Մայրը

իր պաշտօնն սկսելէն առաջ՝ յատենի ժողովոյ
ընկերուհւոյ հանդիսաւոր ուխտ կընէ հաւատա-
րիմ մնալ իր կոչման, Մայր ճշմարիտ ըլլալ
որբոց, անոնց իրաւանց պահպանութեան պատ-
կառ կալ, և Որբանոցի կանոնաց ճշդիւ գոր-
ծադրութեան հսկելով, իր վարուք և բարուք
օրինակ բարի հանդիսանալ ամենուն։

Յօդ. 14 — Որբանոցի մօր պաշտօնն է Որ-
բանոցի վերատեսչութիւնը։ Նա կընդունի Որ-
բասէր ընկերութեան անդամ ըլլալ փափաքող
քոյրերը, և անոնց ամեն մէկուն պաշտօնն ու
պարտաւորութիւնները կը սահմանէ։

Նա կընդունի յՈրբանոց պատսպարիլ ուզող
որբերը, և անոնց խնամատարութեան և դաս-
տիարակութեան համար պէտք եղած պաշտօնա-
կալները կընտրէ և վարձքերնին կը սահմանէ։

Յօդ. 15 — Որբանոցի բոլոր հաստատ և
նուէրք Մօր ձեռքը կը յանձնուին, և նա կը հր-
տասայէ ամեն ծախսուց համար պէտք եղած ելքը։

Յօդ. 16 — Մայրը կը հսկէ Որբասէր ընկե-
րուհւոյ իրաքանչիւրում պաշտօնի ըստ օրինի կա-
տարմանն։ Պակասութեան մէջ գտնուողները կը խր-
ատէ, և յետ երկիցս և երիցս յորդորանաց ան-
ուղղայ գտնուողները կարտաքսէ ընկերութենէն։

Յօդ. 17 — Մայրը խնամք կը տանի և կը
հսկէ պատսպարեալ որբոց դաստիարակութեան,

և ուսմանց և ձեռագործական արուեստից մէջ յառաջադէմ զարգացման հոգ կը տանի. և ամեն մէկուն ապագայն յարգարելով, ամուսնութեամբ կամ այլում Որդեգրութեամբ կամ պաշտօնակալութեամբ և կամ Որբասէր ընկերուհեայ կարգն անցուցանելով, որբոց դասը հետզհետէ թեթևցնելու, և նորեկ որբոց տեղ պատրաստելու ջանք կընէ։

Յօդ. 18 — Մայրը իր պաշտօնն դիւրութեամբ կատարելու համար Որբասէր ընկերուհեայ մէջէն երեք անձինք կընտրէ իրեն խորհրդակից օգնական, և անոնց հետ միկտեղ Որբանոցի Վարչական խորհուրդ կազմելով՝ ամենայն ինչ խորհրդակցութեամբ կը տնօրինէ։ Այն երեք ընկերուհիք Մօր խորհրդակից-օգնականութիւն ընելէ զատ, մասնաւոր պաշտօն կը վարեն. մէկը Մօր փոխանորդութիւն ընելով անոր բացակայութեան ժամանակ. երկրորդը՝ դանձապետութիւն Որբանոցի, և երրորդը՝ գրագրութիւն Որբանոցի վարչութեան։ Այսոնց ամենուն պաշտօնը երկու տարի կը տևէ, սակայն վերընտրելի են, և միշտ աղատ պաշտօնէ հրաժարելու։

Յօդ. 19 — Մայրը ամեն տարեգլուխ որբանոցի հաշիւները Վարչական խորհրդով կարգադրելով, թէ՛ անցեալին հաշուեցոյցը, և թէ նոր տարւոյ ծախուց հաշուեկշիռը կը պատրաստէ, և բացատրիչ տեղեկագրով մը հանդերձ կուղղէ առ Պատրիարք Կոստանդնուպոլսոյ։

Յօդ. 20 — Մայրը յիշեալ հաշուեկշռոյն վրայ Պատրիարքի կողմէն ընդունած հրամանին համեմատ Որբանոցի տարեկան ծախքը կը հոգայ Հաստատութեան հասոյց չափովը որբեր խնամելու պայմանաւ, բայէն պարտք ընելէ կը զգուշանայ և օր աւուր Որբանոցի հասոյթն առատացնելու ամեն ջանք 'ի գործ կը դնէ։

Յօդ. 21 — Եթէ հարկը պահանջէ որ Որբանոցը տարուան մէջ հաշուեկշռոյն նախատեսութենէն վրիպած արտաքոյ կարգի ծախք մը ընել պարտաւորի, Մայրը Վարչական խորհրդոյ որոշմամբ ունի իշխանութիւն նոյն ծախքը տնօրինել, եթէ երկու հազար դրուշէն աւելի չէ։ Իսկ այն գումարէն աւելի ծախուց համար Մայրը պարտաւոր է մասնաւոր տեղեկագրով հրաման խնդրել Պատրիարքէն։

Յօդ. 22 — Որբանոցի չէնքին և կալուածոյ ամենայն տարեկան ծախքերն ընչից և կարասեաց մանրամասն ցուցակը ընդհանուր Տումարի մը մէջ կարձանագրուի։ Այն տումարը՝ հանդերձ կալուածոյ և պաշտօնական գրով (տէնէթ, հէոմէթ, ֆիլրման, և ն.) տրիկեղ մը մէջ կը փակուի. և բանալին Մօր քով, բայց

կղզանքի վրայ խորհրդականաց կնքովը կը կընքուի։

§ 23 — Որբանոց պատսպարեալ որբուհիք Որբանոցի մէջ կը դաստիարակուին և կուսանին, —

Ա. Հայերէն ընթերցանութիւն, գիր և քերականութիւն.

Բ. Քրիստոնէական վարդապետութիւն.

Գ. Պատմութիւն — Սրբազան, Աշխարհային և Արտաքին.

Դ. Համարողութիւն — Թուաբանութիւն և Երկրաչափական մանր գիտելիք։

Ե. Գեղագրութիւն, Գծագրութիւն և Նկարչութեան վարժութիւն.

Զ. Աշխարհագրութիւն.

Է. Երգեցողութիւն — Եկեղեցական և Աշխարհային.

Ը. Ձեռագործական արուեստք։

§ 24. — Վերոյիշեալ ուսմունք և արուեստք անհրաժեշտ ուսանելիք են բոլոր որբոց։ Իսկ զարգացելոց՝ օտար լեզու և դաշնակ ալ կրնայ դաս տրուիլ, եթէ Որբանոցի հասքը բաւեն անոնց ծախքն ալ հոգալու։

§ 25 — Որբանոց վարժարանը պատրաստարեալ որբոց յատուկ է. զրկէն աշակերտ չընդունուիր ո՛չ դիւրութիւն և ո՛չ ցերեկուանի համար։

§ 26 — Որբոց խնամատարութեան և դաստիարակութեան պէտք եղած բոլոր պաշտօնակալները՝ ինչպէս են Տնտես, Խոհարար, Լուսայարար, Սպասուհի, Կառավարիչ, Դաստիարակ, Դաստատու, Լայլն, Որբասէր ընկերուհեաց մէջէն կընտրուին։ Եւ եթէ ասանցմէ յարմար անձինք չը գտնուին, զրսէն ալ կրնան առնուիլ, բայց երբէք երիտասարդ մարդիկ չընտրուելու պայմանաւ, և կանայք նախապատ համարուելով միշտ արանց։ —

Այսոքիք են տասնամեայ վաստակոյս արդիւնքը, զոր Տէր օրհնեց, և արժանի ըրաւ զիս այսօր նուիրել Լուսաւորչական Հայկազնեայց սիրելի Աղգիս ընդհանրութեան։

Խնդրեմ յԱստուծոյ շնորհել ինձ տակաւին վաստակել Որբանոցիս համար, որոյ յառաջադիմութեան նուիրած եմ կեանքս մինչև յաւիտեան վայրկեան։ Եւ խնդրեմ յԱղգէս որ յետ իմ մահուան՝ Որբանոցիս գրութիւնն անվտանգ պահելով, նախանձախնդիր ըլլայ անոր օր քան զօր պայծառանալուն։

Մասնաւորապէս սոյն Կտակաւ կամիմ և խնդրեմ որ

1. Որբանոցս երբէք ուրիշ որ և է Աղգա-

յին հաստատութեան հետ չը միացուի, այլ միշտ անկախ մնայ և ինքնուրոյն կառավարուի հաստատեալ կանոնաց համեմատ։

2. Որբանոցիս կալուածները, եկամուտները և հասոյթներն անկորուստ պահուին. և որ աւուր զարգանալուն ամեն ջանք 'ի գործ դրուի։ Եւ ամենայն ինչ յանուն Մարիամայ Յովակիմեան Պաշտպանի Որբանոցիս պաշտօնապէս արձանագրել տալով, որոյ ապրդայն ապահովելու մեծ խնամք տարուի։

3. Որբանոցիս Վարչութիւնը միշտ Որբասէր ընկերութեան ձեռքը մնայ. Մայր որբոց միշտ անոնց մէջէն ընտրուի։ Սակայն Աղգն հսկող ըլլայ Որբանոցի կանոնաւորապէս խնամարկութեան, և նախանձախնդիր՝ կանոնաց ճշդիւ գործադրութեան. որոյ ուսումնական և տնտեսական տրամադրութիւնք միայն ժամանակին ներդաշնակութեամբ կատարելագործուին, Որբասիրաց ընկերութեան և Կոստանդնուպոլսոյ Պատրիարքին համահաճութեամբ. սակայն հիմունքն անխախտ մնան և սկզբունքն անխափան։

Հանեցի Տէր օրհնել Հաստատութեանս վաստակաւորները մինչև յվախճան ժամանակի. և տրդելու այն ամեն դիտաւորութեանց կատարումն՝ որ շարակամութեան կամ անխոհեմութեան տրդիւնք ըլլալով, կրնան հիմն 'ի վեր տապալել խղճալի որբոց միակ պատսպարան և կրթարան Որբանոցս, զոր Աստուածային կամաց, Աստուածածնի պաշտպանութեան և Աղգիս հսկողութեան յանձնելով կատարագրեմ։

12/24 Փետրվար 1876 ՍՐԲՈՒՀԻ ՄԱՅՐԱՊԵՏ
ՆՇԱՆ ԳԱԼՖԱԵԱՆՑ

Եւ. որ Վարդանանց Զօրավարաց։

Ստորագրեալքս յայտ առնեմք թէ այս ստորագրութիւնը Սրբուհի Մայրապետի Նշանեան Գալֆաեանց ձեռագիրն է, զոր յատենի Թաղական Խորհրդոյս ինքնայօժար դրաւ կոտակարգոյս ներքիւ, գիտելով քաջ սորին պարունակութիւնը, և բացարձակապէս յայտնելով նաև բանիւ բերանոյ թէ 1866 թուին Թաղիս մէջ հիմնած Որբանոցը, զոր տասնամեայ աշխատութեամբ յաջողեցաւ օժտել և բարեկարգել, յօժարութեամբ սրտի կը նուիրէ Լուսաւորչական Հայկազեան Աղգիս ընդհանրութեան, մնալով ինքն Մայր Որբոց և վերատեսուչ Որբանոցի մինչև յմահ։

Ի դիմաց Թաղական Խորհրդոյ
Վասն Ֆոնդապրի Ֆոնդապետ
Ց. ՍԻՒՆԿԻՒՃԵԱՆ Ս. ԱՐԱՊԵԱՆ
12 փետր. 1876 (կնիք Թաղ. Խորհրդոյ)
Թաղ. Խորհրդարան
Ի Խաղիզ Կ. Պոլսոյ

Որբանոցին խնամակալապետ
ԳԷՈՐԳ ՔՀՆՑ ԱՐԾՐՈՒՆԻ

1875

Հ. ՍՍՀ ՊՄԵՐԵՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ազգային Վարչութեան Տնտեսական Խորհուրդը ներկայ Կոտակագիրս քննելով՝ օրինաւոր կը դատէ և կը վաւերացնէ զայն։

10 մարտ 1876 Ի գլխոյ Տնտես. Խորհրդոյ

Ատենադպիր Ատենապետ

Մ. ԱԼԻՖՍԱՆԵԱՆ Գ. ՍԷԼԻՄԻԷՃԵԱՆ

Ի Պատրիարքարանի Հայոց

Կ. Պոլիս

Ներկայ Կոտակագիրս ըստ վկայութեան Ազգային Տնտեսական Խորհրդոյ օրինաւոր դատելով կը հաստատեմք, և կը վաւերացնեմք պաշտօնական կնիքք և ստորագրութիւնք որ ի սմին, և ասոր երեք օրինակներէն մին Դիւանատան Պատրիարքարանի, երկրորդը Խասգիւղի Թաղական Խորհրդոյ և երրորդ օրինակն կոտակարար Սրբուհի Մայրապետի յանձնուելու պայմանաւ. որոյ ի հաստատութիւն կոտորագրեմք և կը վաւերացնեմք կնքով Ազգային Պատրիարքարանիս յանթերի գործադրութիւն։

Պ. Կ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

18 Մարտ 1876

Ի Պատրիարքարանի Հայոց

Կ. Պոլիս։

Շնորհակալութեամբ ընկալեալ Ազգային Երեսփոխանական Ժողովոյ՝ ի նիստ ԻԳ. ի 26 Մարտ 1876։

Ատենադպիր Ատենապետ

Մայր Դիւանի Մայր Դիւանի

Հ. Ս. ԱԼԱՖԱՆԵԱՆ Ս. ԱՍԼԱՆԵԱՆ